ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- մարտի 2021 թվականի №--Ա
քաղ. Երևան

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՏԵՐՅԱՆ ԵՎ ԿՈՐՅՈՒՆԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՀԱՏՄԱՆ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԵՆԱՍՅՈՒՆԵՐԻ ՎՐԱ ՏԵՂԱԴՐՎԱԾ ԵՐԵՔ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Երևան քաղաքի Տերյան և Կորյունի փողոցների հատման հատվածում գտնվող հենասյուների վրա տեղադրված երեք գովազդային միջոցների սպառման համակարգերը (այսուհետ՝ Սպառման համակարգեր) էլեկտրական ցանցին միացնելու վերաբերյալ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացված՝ «ԷՅ ԸՆԴ ՎԻ ԴԻԶԱՅՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Դիմող անձ) 2021 թվականի հունվարի 26-ի դիմումը,

բ) որ Սպառման համակարգերի միացումն Ընկերության էլեկտրական ցանցին իրականացվում է համաձայն Դիմող անձի դիմումի՝ որպես առանձին սպառման համակարգ, և լրացուցիչ ծախսեր չի առաջացնում,

գ) որ Երևանի քաղաքապետարանի 2021 թվականի փետրվարի 23-ի №52/21865 տեղեկանքի համաձայն՝ վերջինս Դիմող անձին պատկանող հենասյուների վրա տեղադրված երեք գովազդային միջոցների սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման վերաբերյալ առարկություն չունի,

դ) Ընկերության սույն թվականի մարտի 12-ի №Ե-43-21 և Դիմող անձի սույն թվականի մարտի 17-ի գրությունները, որոնց համաձայն՝ վերջիններս չեն առարկում Սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացումը սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով իրականացնելուն,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 13.8-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ Սպառման համակարգերի էլեկտրական ցանցին միացումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 14.4-րդ կետով սահմանված կարգով տեխնիկական պայմաններ տրամադրելու միջոցով՝ կանոնների 13.2 կետի 5-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթի փոխարեն հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի 2021 թվականի փետրվարի 23-ի №52/21865 տեղեկանքը:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ չի թույլատրվում Դիմող անձից պահանջել կատարել վճարումներ, տրամադրել հատուցում, ներկայացնել տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրան ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով, այլ նորմատիվ իրավական ակտերով, սույն որոշմամբ կամ էլեկտրամատակարարման պայմանագրով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանը և Դիմող անձին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- մարտի 2021 թ.